Հաստատում եմ
ՀՀ միջուկային անվտանգության
կարգավորման կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
Ա.Վարդանյան
01. 06 2023թ

Գործուղման հաշվետվություն №____

1. **Անունը, Ազգանունը՝** Աննա Մելքումյան
2. **Պաշտոնը՝** ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի միջուկային տեղեկատվության և միջազգային համագործակցության բաժնի պետ
3. **Գործուղման վայրը՝** Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն, Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն
4. **Գործուղման ժամկետը՝** 8-ից 12-ը մայիսի 2023
5. **Գործուղման տարբերանշանը և կազմակերպիչը՝** RER0047, Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ) տեխնիկական համագործակցության տարածաշրջանային ծրագիր
6. **Գործուղման նպատակը՝** մասնակցել RER/0/047 ծրագրի շրջանակներում կազմակերպված ներածական աշխատանքային հանդիպմանը՝ նախատեսված ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության ծրագրերի նորանշանակ ազգային համակարգողների, նրանց օգնականների, ծրագրերի կոնտրպարտների համար որպես ԱԷՄԳ-ի կողմից հրավիրված փորձագետ
7. **Գործուղման արդյունքները՝**

ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության (ՏՀ) ծրագրերի նորանշանակ ազգային համակարգողների, նրանց օգնականների, ծրագրերի կոնտրպարտների համար նախատեսված ներածական աշխատանքային հանդիպման նպատակն էր ներկայացնել ՏՀ կանոնները, գործընթացները, ընթացակարգերը, ինչպես նաև՝ ազգային համակարգողների, նրանց օգնականների, ծրագրերի կոնտրպարտների գործառույթները ու պարտականությունները՝ ապահովելու ՏՀ ծրագրերի արդյունավետ իրականացումը: Աշխատանքային հանդիպման ժամանակ ներկայացվել է Հայաստանում ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության ծրագրեի իրականացման փորձը, մասնավորապես.

1. Ներկայացվել է տեղեկատվություն ԱԷՄԳ-ի հետ տեխնիկական համագործակցության ծրագրերի շրջանակի մշակման կազմակերպման, համակարգման և ստորագրման վերաբերյալ՝ ընդգրկելով շահագրգիռ կողմերի հետ քննարկումների կազմակերպման վերաբերյալ: Ներկակացվեց փաստաթղթի տիպային ձեը և ընդգրկվելիք տեղեկությունը, ԱԷՄԳ-ի և պետական մարմինների հետ համաձայնեցման գործընթացը:

2. Ներկայացվել է տեղեկատվություն ԱԷՄԳ-ի հետ տեխնիկական համագործակցության նոր ցիկլի համար ազգային ծրագրեի մշակման կազմակերպման, ծրագրեի վերաբերյալ առաջարկությունների ստացման, քննարկման վերաբերյալ, ԱԷՄԳ ներկայացվելիք առաջարկությունների ընտրության չափանիշները և ներկայացումը PCMF-ի միջոցով:
3. Ներկայացվել է տեղեկատվություն գիտական այցերի և վերապատրաստումների պլանավորման, կազմակերպման, ինչպես նաև դրանց հյուրընկալման վերաբերյալ՝ նկարագրելով ծրագրի կոնտրպարտի և ազգային համակարգողի դերն ու գործառույթները:
4. Ներկայացվել է տեղեկատվություն ազգային ծրագրերի շրջանակներում սեմինարների, փորձագիտական առաքելությունների կազմակերպման վերաբերյալ, ներառյալ տեխնիկական առաջադրանքի մշակման, ԱԷՄԳ ներկայացման, քննարկման, համաձայնեցման, վերանայման, կազմակերպական խնդիրների կարգավորման վերաբերյալ:
5. Ներկայացվել է տեղեկատվություն ՏՀ տարածաշրջանային և միջտարածաշրջանային նախագծերի շրջանակներում կազմակերպված սեմինարներին և վերապատրաստման դասընթացներին մասնակիցների առաջադրման մասին:
6. Ներկայացվել է տեղեկատվություն ՏՀ ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռք բերման, դրանց ստացման, հարկերից ազատման, մաքսազերծման և այդ նպատակով կիրառվող կանոնների, ՄԱԿ-ի գրասենյակի, ազգային կանոնակարգերի գործառույթների վերաբերյալ:
7. Նշվել է հաղորդակցության դերը ԱԷՄԳ-ի ազգային համակարգողին հանձնարարված պարտականությունների կատարման գործում՝ շահագրգիռ կողմերի, գործընկերների, դոնորների և բազմաթիվ այլ կազմակերպությունների ու անհատների հետ երկխոսության և արդյունավետ հաղորդակցության հաստատման համար:
8. Ներկայացվել է տեղեկատվություն, թե ինչպես ստանալ ծրագրի կարգավիճակի ամբողջական հաշվետվությունը TC PRIDE հարթակում, ինչպես նաև՝ կոնտրպարտի դերը ազգային և տարածաշրջանային ծրագրերի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացման մասին:
9. Ներկայացվել է Հայաստանում ԱԷՄԳ-ի վերահսկողության և գնահատման առաքելությունների հյուրընկալման և անցկացման փորձը:

Հաշվետվությունը ներկայացրեց՝ Աննա Մելքումյան

31 Մայիսի 2023